

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՄԱՆ

31 մայիսի 1999 թվականի թիվ 84

ԽՍԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՉԱՓԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերում ջրաչափերի նկատմամբ ներկայացվող տեխնիկական պահանջները պետական գրանցման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերում ջրաչափերի նկատմամբ ներկայացվող տեխնիկական պահանջները:

2. Սույն հրամանով հաստատված պահանջները սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՋՐԱՉԱՓԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետությունում օգտագործվող ջրաչափերը պետք է բավարարեն ՀՀ պետատանդարտի կողմից թույլատրված (գործադրված) միջպետական եւ միջազգային նորմատիվային հետեւյալ փաստաթղթերի պահանջները՝ „ԳՕՍՏ 14167-87,, , „ԳՕՍՏ 6019-83,, , „ԻՍՕ 4064/1-77,, , ԴՍՕ 4064-1-93,, եւ հավելված 1-ում նշված խմելու ջրի ջրաչափերի հիմնական հանձնարարելի տեխնիկական ցուցանիշներին:

2. Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերում պետք է կիրառել՝

15, 20, 25, 32, 40 մմ պայմանական տրամագծով թեւավոր, միաշիթային, չորընթաց, հորիզոնական տեղադրման, պարուրակային միացումով ջրաչափեր, իսկ 50 մմ եւ բարձր չափերի դեպքում՝ տուրբինային հորիզոնական կամ կոմբինացված տեղադրման կցաշուրթային (ֆլանեցային) միացումով ինֆորմացիայի ավտոմատ հաղորդման եւ կանչովի ընթերցման հնարավորությամբ (որի տարբերակները կհայտարարվեն մրցույթի անցկացման պայմաններով) ջրաչափեր:

Հավելված 1

ԽՍԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՉԱՓԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ցուցանիշը Ջրաչափերի ցուցանիշները ըստ պայմանական տրամագծերի (մմ)

15 20 25 32 40 50 65 80 100 150 200 250 300 400 500

- 1. Ջրաչափերի տեսակները
 - թեւավոր, միաշիթային. չորընթաց, հորիզոնական. պարուրակային միացումով + + + + +
 - տուրբինային, հորիզոնական կամ կոմբինացված, տեղադրման, կցաշուրթային (ֆլանեցային) միացումով - - - - + + + + + + +
 - պաշտպանիչ ցանցով + + + + +

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՉԱՓԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ցուցանիշը Ջրաչափերի ցուցանիշները ըստ պայմանական տրամագծերի (մմ)

15	20	25	32	40	50	65	

- 2. Տեխնիկական տվյալները
 - զգայունությունը թյան շեմը Խ.մ/ժ 0.012 0.02 0.025 0.03 0.064 0.08 0.25
 - միմիմալ ծախսը -,- 0.03 0.05 0.065 0.09 0.16 0.16 0.55
 - նոմիմալ ծախսը -,- 1.5 2.5 3.5 5 10 15 50
 - Մաքսիմալ ծախսը -,- 3 5 7 10 20 30 100
 - Ճնշման անկումը՝ քար. 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.3 0.3
 - նշ ավելի
 - Հաշվիչ- խմ. 99999 99999 99999 99999 99999 99999 99999,9
 - ների
 - սահմանային արժեքը (հաշվիչ մեխանիզմի նիշերի քանակը)

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՉԱՓԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ

պարուրա- կային միացման նոմինալ տրամ.		1/4"	1/2"	
	3/4" 1"	1	1	2"

3. Ջրաչափի աշխատանքային (ջրի) ջերմաստիճանը՝ ոչ ավելի 30 C
4. Նոմինալ աշխատանքային ճնշումը ոչ պակաս - 10 բար:
5. Ճշտության դասը „B,,: Թույլատրելի մաքսիմալ ճշտությունը ներքին գոտում

/qmin : qmin/= + 5 o/o; t.q./qt : qmax/= 2 o/o

6. 50 մմ եւ բարձր պայմանական տրամագծով (տուրբինային) ջրաչափերը պետք է ունենան ցուցմունքների հեռահաղորդման հնարավորություն:
7. Պարուրակային միացումով ջրաչափերը պետք է կոմպլեքսավորվեն միացման խողովակափոստով (մուտքի խողովակափոստի երկարությունը պետք է լինի 6 Dy., իսկ ելքինը՝ 2 Dy) եւ մանեկով) շտուգեր եւ գայկա), իսկ 15,20 եւ 25 մմ պայմանական տրամագծով ջրաչափերը նաեւ հակադարձ փականով (եթե ջրաչափի կոնստրուկցիայով դա նախատեսված չէ):
8. Ջրաչափերի պատրաստման համար օգտագործված նյութերը պետք է համապատասխանեն խմելու ջրի ջրաչափերի համար Պետտանդարտով առաջադրված պահանջներին եւ չպետք է ազդեն խմելու ջրի որակի վրա (ԳՈՍՍ 2874 - 83):
9. Ջրաչափերի ծառայության երաշխավորված ժամկետը՝ ոչ պակաս - 18 ամիս
10. -,- միջատուգաչափական պարբերականությունը - 5 տարի
11. -,- ծառայության ժամկետը՝ - 12 տարի

Չթվարկված մյուս բոլոր տվյալներն ու պահանջները
ըստ՝ ԳՈՍՍ 14167-83, ԳՈՍՍ 6019-83 եւ ԻՍՕ 4064/1-77,
ԻՍՕ 4064-1-93

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑ
02. 06. 1999թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 117990091